# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա.Վեհափառի փողոց, հեռ. (0222) 65203, էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

14 դեկտեմբեր 2017թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԱԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9(ինը) անդամներ: Բացակա էին Հայկազ Բաղդասարյանը, Արման Խանզադյանը :

**<u>Ավագանու նիստին մասնակցում էին՝</u>**

Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակիցներ Միշա Եղիազարյանը, Լիդիա Պողոսյանը, Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրի վարչական ղեկավարի լիազորություններ իրականացնող Գևորգ Հայրապետյանը, Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավարի լիազորություններ իրականացնող Մնացական Գևորգյանը :

**<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը :</u>**

**<u>Նիստն արձանագրում էր Լաուրա Ալեքսանյանը :</u>**

Համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը ներկայացրեց ավագանու նիստի օրակարգում ընդգրկված հարցերը:

1) 2018 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը հաստատելու մասին,

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի կողմից 2018 թվականի համար մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրայքաչափերը հաստատելու մասին,

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին,

4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,

6)Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների կազմերում ավագանու ներկայացուցիչներ առաջադրելու մասին,

7)Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին,

8)Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին,

9) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղադրման կարգն ու պայմանները հաստատելու մասին,

10) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում իրականացված իրավական, մասնագիտական հսկողության մասին:

Հ. Բալասյանն առաջարկեց օրակարգից հանել տեղական տուրքերի, վճարների դրույքաչափերին վերաբերող հարցերը, քանի որ անհրաժեշտություն է առաջացել վերանայելու դրանք՝ կապված Կոտայքի մարզպետարանից ստացված գրության հետ, որի համաձայն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության դեկտեմբերի 13-ի թիվ 01/18/8092-17 հանձնարարականով աղբահանության ծառայությունների հարաբերությունները կարգավորելու նպատակով առաջարկվում է 2018 թվականից սկսած համայնքում բնակելի և ոչ բնակելի նշանակության շենք-շինություններում աղբահանության վճարների սահմանման և պայմանագրերի կնքման ժամանակ առաջնորդվել ներկայացվող աղբահանության դրույքաչափերի մեթոդական ուղեցույցով:

Հ. Բալասյանն առաջարկեց նաև օրակարգից հանել համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական հիմունքներով գործող խորհրդակցական մարմինների կազմերում ավագանու անդամների ներկայացուցիչներ առաջադրելու հարցը, որպեսզի այդ մարմիններում Բյուրեղավան համայնքի երեք բնակավայրերից էլ ներկայացուցիչներ առաջադրվեն: Այնուհետև համայնքի ղեկավար Հ. Բալասյանը ներկայացրեց ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Լսեցին

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Ջեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 14-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին,

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,

4)Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին,

5)Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին,

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղադրման կարգն ու պայմանները հաստատելու մասին,

7) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում իրականացված իրավական, մասնագիտական հսկողության մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. / որոշում N 10-Ա/

Օրակարգը հաստատելուց հետո հաստատված հերթականությամբ ներկայացվեցին որոշումների նախագծերը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՄԻՆ**

**/Ջեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2018 թվականի համար 280000 (երկու հարյուր ութսուն հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. / որոշում N 11-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՄԻՆ**

**/Ջեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N2 հավելվածի:

3. Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. / որոշում N 12-Ա/

Լսեցին

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԼԻԴԻԱ ՊՈՂՈՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2018 թվականի համար՝ համաձայն N1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2018 թվականի համար՝ համաձայն N2 հավելվածի:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Բյուրեղավանի արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2018 թվականի համար՝ համաձայն N3 հավելվածի:

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի քաղաքային համայնքի «Մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2018 թվականի համար՝ համաձայն N4 հավելվածի:

5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2018 թվականի համար՝ համաձայն N5 հավելվածի:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. / որոշում N 13-Ա/

Լսեցին
*ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Ջեկ. ԼԱՈՒՐԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ/*

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 183-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետի, 37-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-14-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի և հիմք ընդունելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» № 1325-Ն որոշումը՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 14-Ն/

Լսեցին
*ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Ջեկ. ԼԱՈՒՐԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետի և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13 և 14 հոդվածները և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 3-րդ կետը՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 15-Ն/

Լսեցին
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Ջեկ. ԼԱՈՒՐԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետի, «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղադրման կարգը՝ համաձայն N1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդի տեղադրման պայմանները՝ համաձայն N2 հավելվածի :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 16-Ն/

Լսեցին
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

*/Ջեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2017թվականի նոյեմբերի 02-ի N 01/15.1/4974-17 գրությունը՝ ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կողմից Բյուրեղավան համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ կազմված N21 արձանագրությունն ընդունել ի գիտություն.

2) միջոցներ ձեռնարկել արձանագրված խախտումները և թերությունները վերացնելու համար,

3) կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 17-Ա/

Օրակարգի հարցերը սպառվեցին: Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ

ԳԵՈՐԳԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ____________

ՎԱՀՐԱՄ ԱՊՐԵՍՅԱՆ____________

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ____________

ԱՐՏՅՈՄ ԱՎԱԳՅԱՆ____________

ԱԼԲԵՐՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ____________

ԱՐԳԱՄ ՇԱՀՅԱՆ____________

ՎԱՐԴԱՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ____________

ՀԵՆՐԻԿ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ____________

ԱՐՄԵՆ ՕՀԱՆՅԱՆ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ____________ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ